Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ

(համաձայն հերթական համալիր ստուգման արդյունքների)

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 23.09.2011թ թիվ 22 արձանագրությամբ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ -ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

RL 1-001 կանոնների 5.4-րդ, 7.6-րդ, 8.2.3-րդ կետերի, 8.2.5-րդ և 8.2.7-րդ կետերի «ա» պարբերությունների, RL 1-002 կանոնների 13-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ և 28-րդ կետերի, RL 1-003 կանոնների 29.3-րդ և 29.4-րդ, RL 1-011 կանոնների 2-րդ կետերի, RL 1-017 կանոնների 22-րդ և 23-րդ կետերի, RL 1-020 կանոնների 8-րդ և RL 1-022 կանոնների 4-րդ կետերի, ինչպես նաև Բյուրոյի կանոնադրության 29-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով: Ընկերությանը տրվել հանձնարարական՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել RL 1-020 կանոնների 8-րդ և RL 1-022 կանոնների 4-րդ կետերի խախտումները:

RL 1-001 կանոնների 8.1.1-ին և 8.1.2-րդ կետերի, RL 1-002 կանոնների 25-րդ և 26-րդ կետերի, RL 1-017 կանոնների 4-րդ, 10-րդ և 21-րդ կետերի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 250.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-001 կանոնների 8.4.1-ին և RL 1-017 կանոնների 5-րդ կետերի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 100.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-002 կանոնների 14-րդ և 15-րդ կետերի և RL 1-010 կանոնների 1-ին կետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 225.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-002 կանոնների 2-րդ կետի, 12-րդ կետի 1-ին ենթակետի և RL 1-017 կանոնների 6-րդ կետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 300.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-001 կանոնների 8.3.1-ին կետի, RL 1-017 կանոնների 5-րդ և 12-րդ կետերի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 200.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-009 կանոնների 2.1-րդ կետի, 3-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության և 4-րդ ենթակետի «ա» պարբերության, 5-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունների և 6-րդ ենթակետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 625.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

Որոշմամբ սահմանված տուգանքների ընդհանուր գումարը կազմել է 1.700.000 ՀՀ դրամ: